

Կազմված է « 22 » « 09 » 2019թ.
Բաղկացած է 7 (յոթ) թերթից
Ընդամենը՝ 2 (երկու) օրինակ
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

<<Միասնական հայրենիք>>
կուսակցության 22.09.2019թ. կայացած
հիմնադիր համագումարի որոշմամբ
/թիվ 01 արձանագրություն/

Նախագահ՝  Ս.Բաբայան

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ԱՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման ամսաթիվ՝ « 28 » « 10 » 2019թ

Գրանցման համար 443.172.1098546

ՀԱՀ 90045886



Գործակալության պետ՝ Գ.Մաքսիմովա



**<<ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ>>
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ**

ք. Ստեփանակերտ, 2019թ.

«Միասնական հայրենիք» կուսակցությունը (այսուհետ՝ Կուսակցություն) նպատակ ունի Արցախի Հանրապետությունում ձևավորել հասարակական-քաղաքական այնպիսի միավորում, որը հիմնված կլինի ոչ թե առանձին անհատների կամ խմբերի կամայականությունների ու շահերի վրա, այլ կարտահայտի ազատականության գաղափարների կրողների և հասարակության այն սոցիալական խմբերի (քաղաքացիների) շահերը, որոնք Արցախը տեսնում են որպես անվտանգ, կայուն և զարգացած պետություն, մարդու իրավունքների և հիմնարար արժեքների, գիտակից քաղաքացիական հասարակության ձևավորման մեջ:

Կուսակցությունն ազատական և առաջադիմական գաղափարների միջոցով հասարակության և պետության զարգացմանը միտված քաղաքական կազմակերպություն է: Նրա հիմնադիր անդամները զբաղված են ծրագրային հիմնախնդիրների և հասարակությանը հուզող կարևոր խնդիրների ուսումնասիրությամբ և վերլուծությամբ, կուսակցության քաղաքականությունից ելնելով՝ անընդհատ ապահովելով նրա գաղափարաքաղաքական առաջընթացն ու զարգացումը:

Կուսակցության գործունեությունը նպատակաուղղված է.

- Սահմանադրական բարեփոխումների իրագործմանը:
- Արցախում սոցիալական, իրավական և ժողովրդավարական պետության լիակատար կայացումն ապահովող պայմանների ստեղծմանը:
 - Ազգային միասնության սկզբունքներով Արցախի անվտանգության հիմնահարցերի համակարգային ռազմավարության մշակմանն ու իրացմանը:
 - Արցախի անվտանգության, տնտեսական և հասարակական կյանքում համայն հայության միասնականությանը:
 - Արցախում սոցիալ-տնտեսական խնդիրների ուսումնասիրմանը և դրանց լուծման արդյունավետ մեխանիզմների ներդրմանը:
 - Արցախի Հանրապետության՝ միջազգային հանրությանն ինտեգրվելու և նրա կողմից ճանաչվելու գործընթացների նպաստմանը:
 - Սփյուռքահայության ներուժի համախմբման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:
 - Դատարանների անկախության ապահովմանն ուղղված իրական գործողություններին:
 - Իշխանության և բիզնեսի տարանջատմանը միտված իրական մեխանիզմների ստեղծմանը:
 - Սոցիալական արդարության վերականգնմանը:
 - Մրցունակ տնտեսական համակարգի կայացմանը և հարկային դաշտի պարզեցմանը:
 - Ազգային արժեհամակարգի բաղադրիչների պահպանմանն ու զարգացմանը:
 - Ժողովրդագրական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը (ծնելիության աճի խթանում, արտագաղթած, քնակիչների վերադարձ):
 - Վարչական շրջանների և առանձին համայնքների տնտեսական համաչափ զարգացման ապահովմանը և ներդրումային ծրագրերի ներդրմանը:
 - Գյուղական շրջաններում զբաղվածության խնդրի լուծմանը:
 - Աղքատության հաղթահարմանն ու սոցիալական բևեռացման թուլացմանը: